ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2013 թվականի N 568 - Ա

ք. Հրազդան

1987-1995 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 7-ի N 1212-Ն որոշման 7-րդ կետի դրույթների՝ ***որոշում եմ.***

1. Անցկացնել 1987-1995 թվականներին ծնված քաղաքացիների ձմեռային զորակոչը:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյանին՝ 2013 թվականի դեկտեմբեր – 2014 թվականի հունվար ամիսներին անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զիվորական կոմիսարիատում հաշվառված արական սեռի այն քաղաքացիների ժամկետային զինվորական ծառայության ձմեռային զորակոչ, որոնց 18 տարին լրանում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնք պարտադիր զինվորական ծառայությունից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3. Ստեղծել զորակոչային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Գևորգյան - նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ,
2) Ե. Խաչատրյան - անդամ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ,
3) Վ. Մնացականյան - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական,
4) Ռ. Մկրտչյան - անդամ, ավագ բժիշկ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վիրաբույժ:

4. Հաստատել զորակոչիկների բժշկական քննություն անցկացնելու հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Վ.Սազայան թերապևտ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
2) Ռ.Մկրտչյան վիրաբույժ <<Նաիրիի բժշկական կենտրոն>>փակ բաժնետիրական ընկերություն,
3) Լ.Ավետիսյան ակնաբույժ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
4) Ա.Խալաթյան քիթ-կոկորդ-ականջ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
5) Հ.Կարապետյան նյարդաբան <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
6) Ք.Արեստակեսյան սրտաբան <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
7) Ա.Մանուկյան հոգեբույժ <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
8) Ա.Կառավարիչյան մաշկավեներաբան <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն,
9) Ս.Օհանջանյան բուժքույր <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն:

5. Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան և նյութական պայմանների ստուգման և քննման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Սիմոնյան - նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ, մայոր,

2) Վ. Մնացականյան - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական,

3) Համայնքի ղեկավար - ըստ բնակավայրի:

6. Բժշկական քննություններ անցկացնող հանձնաժողովի անդամների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման 1-ին կետի պահանջների համաձայն:

7. 2013 թվականի դեկտեմբեր – 2014 թվականի հունվար ամիսներին մարզի բժշկական կենտրոններում զորակոչային տարիքի անձանց բժշկական քննություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն:

8. <<Նաիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Վերանյանին՝

1) Ժամանակին կազմակերպել այն պատանիների հետազոտումը և բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են հետազոտման կամ բուժման,

2) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

9. Հանձնարարել համայնքների ղեկավարներին և ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն զինվորական կոմիսարիատի կողմից զորակոչիկներին հավաքական ներկայացնելու գրաֆիկի և անհատական ծանուցագրերի, ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյանին՝ զինվորական կոմիսարիատի սպասարկման տարածքում գտնվող ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին ներգրավել, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:

11. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ս.Մարտիրոսյանին՝ զորակոչային տեղամասերում ապահովել հասարակական կարգի պահպանությունը և կազմակերպել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումներն ու նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս:

12. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ Ն. Եղիազարյանին՝ ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը զորակոչային տեղամասերից հանրապետական հավաքական:

13. Սույն որոշման կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյանի վրա:

14. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ